Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով շարունակել է իրականացնել հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում: Ավելին, Առաջին լրատվական ալիքի համաժամանակյա ինտերնետային հեռարձակումը նույնպես հասանելի է www.1lurer.am պաշտոնական վեբ կայքում: Հանրային հեռուստաընկերության եթերին կարելի է հետևել ինչպես անհատական համակարգչով ու ինտերնետային հեռուստատեսությամբ, այնպես էլ բջջային հեռախոսներով և պլանշետներով (IPTV և OTT)՝ IOS և Android համակարգերի համար մշակված անվճար բջջային հավելվածների միջոցով: www.1tv.am և www.1lurer.am ինտերնետային կայքերում համաժամանակյա հեռարձակումներն ապահովելու նպատակով LiveStreamCDN ամերիկյան կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում հնարավոր է դարձել աշխարհի գրեթե բոլոր անկյուններ հասցնել որակյալ և չընդհատվող թվային ազդանշան:

Առավել կայուն առցանց հեռարձակում ունենալու արդյունքում տարեցտարի աճում է կայքով և բջջային հավելվածներով համաժամանակյա դիտումների քանակը և ընդհանուր դիտելիության մակարդակը: Հանրային հեռուստաընկերության պաշտոնական վեբ կայքերում հասանելի են եթերում հեռարձակված և արխիվացված բոլոր հաղորդումները՝ հեղինակային և հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:

Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը նախորդ տարի երեք կետով բարելավել է իր դիրքերը վարկանիշային չափումներում՝ բարձրանալով երկրորդ հորիզոնական, իսկ 2021 թվականին կայացած ԱԺ արտահերթ ընտրությունների, հատուկ նախագծերի և միջազգային ձևաչափերի հեռարձակման ժամանակ գտնվել է առաջին հորիզոնականում:

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) պատվերով ՀՀ տարածքում 2021 թվականին իրականացված հարցման արդյունքներով Առաջին ալիքը երեք անգամ ճանաչվել է տեղեկատվության ամենավստահելի աղբյուր հանդիսացող լրատվամիջոց:



Աղբյուր՝ 2021 թվականի փետրվարին իրականացված և 2021 թվականի մարտին հրապարակված Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) "Public Opinion Survey: Residents of Armenia" հաշվետվություն (հղում՝ https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/final_for_publication_armenia_electoral_reform_march_8_2021.pdf)

Բացի այդ, հարցման արդյունքներով տարբեր կրթական մակարդակ ունեցող բոլոր տարիքային խմբերի համար թե՛ Երևանում և թե՛ հանրապետության ողջ տարածքում Հանրայինի Առաջին ալիքը հանդիսանում է տեղեկատվություն ստանալու ամենավստահելի աղբյուրը:

Հանրային հեռուստաընկերության յութուբյան 2 էջերը (Armenian Public TV և Լուրեր) ստացել են Youtube Partner-ի կարգավիճակ՝ միայն 2021 թվականի վեց ամիսների ընթացքում գեներացնելով շուրջ 75,000 ԱՄՆ դոլարի եկամուտ: 2021 թվականին առցանց էջերի ընդհանուր տարեկան դիտումները կազմել են շուրջ 67.5 մլն՝ Առաջին ալիքի էջում և 135.2 մլն՝ Առաջինի լրատվական ալիքում՝ ընդհանուր առմամբ կազմելով համապատասխանաբար 386 մլն և 220 մլն դիտում:

2021 թվականին զգալիորեն բարելավվել են Հանրային հեռուստաընկերության և լրատվական ծառայության սոցիալական ցանցերի ցուցանիշները, ընդ որում միայն Առաջին լրատվական ալիքի յութուբյան էջի հետևորդների քանակը 2020 թվականի համեմատ ավելացել է 80%-ով, իսկ Առաջին ալիքի ու Առաջին լրատվական ալիքի պաշտոնական սոցիալական էջերի հավանումները աճել են շուրջ 20%-ով, հետևորդների թիվը՝ ավելի քան 25%-ով: